Լաութսին և այլոք ընդդեմ Իտալիայի

(գանգատ թիվ՝ 30814/06)

Մեծ պալատի 2011 թվականի մարտի 18-ի վճիռ

Կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 2-րդ հոդված

Հարգանքը ծնողների փիլիսոփայական համոզմունքների նկատմամբ

Հարգանքը ծնողների կրոնական համոզմունքների նկատմամբ

Պետական դպրոցների դասասենյակներում խաչելության տեսարանների ցուցադրումը: *Խախտում չի արձանագրվել:*

Փաստերը

Դիմումատուն, իր երեխաների հաճախած պետական դպրոցի կառավարիչների հանդիպման ժամանակ նշել է, որ դասասենյակներում խաչելության տեսարանների առկայությունը միջամտում է աշխարհիկության սկզբունքին, որի համաձայն նա փորձում է դաստիարակել իր երեխաներին: Դպրոցի կառավարիչների՝ դասասենյակներում խաչելության տեսարանների առկայությունը թողնելու որոշումը նա բողոքարկել է Վարչական դատարանում: Միևնույն ժամանակ 2007 թվականին Կրթության նախարարը հրաման է ստորագրել, որով հանձնարարել է դպրոցների տնօրեններին դասասենյակներում ցուցադրել խաչելության տեսարաններ: Վերջին ատյանը՝ Պետական խորհուրդը, մերժել է Դիմումատուի բողոքը՝ ուժի մեջ թողնելով ստորադաս ատյանի որոշումը: Դիմումատուն և իր երկու որդիները (երկրորդ և երրորդ դիմումատուները) գանգատ են ներկայացրել Եվրոպական դատարան, որը 2009 թվականի նոյեմբերի 3-ին վճիռ է կայացրել՝ միաձայն արձանագրելով Կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 2-րդ հոդվածի խախտում՝ 9-րդ հոդվածի զուգակցմամբ (տե՛ս, Տեղեկագիր թիվ 124):

Իրավունքը՝ Կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 2-րդ հոդված

Պետական դպրոցների դասասենյակներում խաչելության տեսարաններ ցուցադրելու վերաբերյալ որոշումը կազմում է կրթության և ուսուցման վերաբերյալ պատասխանող պետության ստանձնած գործառույթների մի մասը և, հետևաբար, հանդիսանում է թիվ 1 Արձանագրության 2-րդ հոդվածի 2-րդ նախադասության կարգավորման առարկա: Սա այն ոլորտն է, որտեղ գործողության մեջ է դրվում պետության պարտականությունը երաշխավորել ծնողների՝ իրենց զավակների համար իրենց կրոնական ու փիլիսոփայական համոզմունքներին հարիր կրթություն և ուսուցում ապահովելու իրավունքը: Խաչված Քրիստոսը նախևառաջ կրոնական խորհրդանիշ է: Չնայած հասկանալի է, որ առաջին դիմումատուն կարող էր իր երեխաների՝ նախկինում հաճախած պետական դպրոցի դասասենյակներում խաչելության տեսարանների ցուցադրությունը ընկալել, որպես պետության կողմից իր զավակների համար իր փիլիսոփայական համոզմունքներին համապատասխան կրթություն և ուսուցում ապահովելու իրավունքի նկատմամբ հարգանքի բացակայություն, այդուհանդերձ, նրա սուբյեկտիվ ընկալումը ինքնին բավարար չէ թիվ 1 Արձանագրության 2-րդ հոդվածի խախտում արձանագրելու համար: Պետական դպրոցների դասասենյակներում խաչելության տեսարանների առկայության վերաբերյալ որոշումը, սկզբունքորեն, թողնված է պատասխանող պետության հայեցողությանը: Ավելին, այն փաստը, որ Եվրոպայում պետական դպրոցներում կրոնական խորհրդանիշերի առկայության վերաբերյալ միասնական մոտեցում չկար՝ այդ մոտեցման օգտին էր: Հայեցողության սահմանները, այնուամենայնիվ, սերտի կապի մեջ էին եվրոպական վերահսկողության հետ: Ճշմարիտ է, որ պետության նորմատիվ ակտերը, չարգելելով պետական դպրոցների դասասենյակներում խաչելության տեսարանների առկայությունը (ինչն անկասկած քրիստոնեության խորհրդանիշ է), ստեղծել էին այնպիսի տպավորություն, որ դպրոցական միջավայրում նախապատվություն է տրվում պետության կրոնական մեծամասնությանը: Սակայն դա ինքնին բավարար չէր եզրակացնելու, որ պատասխանող պետությունը ներգրավված է ինդոկրինացիայի (կրոնական

քարոզչություն) գործընթացի մեջ: Ավելին, պատի վրա ամրացված խաչելության տեսարանը էականորեն պասիվ խորհրդանիշ է, որն աշակերտների վրա ունեցած իր ազդեցությամբ չի կարող համեմատվել բարոյախրատական քարոզների և կրոնական գործունեության մեջ ներգրավված լինելու հետ: Մեծ պալատը չի համաձայնել Պալատի մոտեցման հետ, համաձայն որի՝ դասասենյակներում խաչելության տեսարանների ցուցադրումը նշանակալի ազդեցություն կունենար երկրորդ և երրորդ դիմումատուների վրա, որոնք այդ ժամանակ տասնմեկ և տասներեք տարեկան էին: Այն հանգամանքը, որ Քրիստոնեությունը խաչելության տեսարանների առկայության միջոցով առավել տեսանելի և մատչելի է դառնում պետք է ենթարկել համապարփակ վերլուծության: Նախ, խաչելության տեսարանների առկայությունը և Քրիստոնեության պարտադիր ուսուցումը փոխկապակցված չեն: Երկրորդ, Իտալիան զուգահեռաբար նման հնարավորություններ է ընձեռել նաև այլ կրոնական ուղղություններին: Ի հավելումն, դիմումատուները չեն պնդել, որ դասասենյակներում խաչելության տեսարանների առկայությունը նպաստավոր դեր է ունեցել քարոզչական միտումներով ուսուցչական փորձի ձևավորման հարցում. նրանք չեն պնդել նաև, որ երկրորդ և երրորդ դիմումատուները ականատես են եղել, որ ուսուցիչը՝ իր գործառույթներն իրականացնելիս, հղումներ կատարեր խաչելության տեսարաններին: Եվ վերջապես, առաջին դիմումատուն ամբողջովին պահպանել է որպես ծնող իր երեխաներին կրթելու և խորհուրդներ տալու, որպես կրթող իր բնական գործառույթներն իրականացնելու և իր սեփական փիլիսոփայական համոզմունքներով նրանց ուղղորդելու իրավունքները: Հետևաբար, պատասխանող պետությունը, կրթության և ուսուցման հետ կապված իր ստանձնած գործառույթների իրականացման ժամանակ ծնողների՝ իրենց սեփական կրոնական և փիլիսոփայական համոզմունքներին համապատասխան կրթություն և ուսուցում ապահովելու իրավունքը հարգելու իր պարտավորությունների համատեքստում գործել է իրեն վերապահված հայեցողության սահմաններում՝ թույլատրելով խաչելության տեսարանների առկայությունը առաջին դիմումատուի զավակների հաճախած պետական դպրոցում:

Եզրակացություն ՝ խախտում տեղի չի ունեցել (ձայների տասնհինգ կողմ և երկու դեմ հարաբերակցությամբ)։